Ընդունելության քննություն

Մայրենի (5-րդ դասարան)

2025-2026 ուստարի

12. 06. 2025

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Դպրոց _____

Ծածկագիր	

Կտրման գիծ----------

Ծածկագիր	

Հրահանգներ.

1. Ուշադիր ընթերցեք բոլոր հրահանգները
2. Ուշադիր ընթերցեք բոլոր առաջադրանքների պահանջները
3. Հստակ և առանց ջնջումների լիացրեք ձեր նախընտրած պատասխանները
4. Գրեք ընթեռնելի ձեռագրով
5. Նախքան աշխատանքը հանձնելը ևս մեկ անգամ ստուգեք այն:

Աշխատանքի տևողությունը 70 րպե:

Միավորների ընդհանուր գումարը	
Գնահատականը 20 միավորային համակարգով	
Ստուգողի ազգանունը և ստորագրությունը	
Առարկայական հանձնաժողովի նախագահ	
Վերանայման (վերջնական) գնահատական	
Վերանայման հանձնաժողովի նախագահ	

Կարդա՛ տեքստը և պատասխանի՛ր տրված հարցերին:

Մեր գյուղի կեչին

Մեր գյուղում զարմանալ կարելի է, թե որքան շատ են կեչիները: Չգիտեմ, թե ինչպես են այդ ծառերն այսքան շատացել մեր գյուղում, բայց համոզված եմ, որ յուրաքանչյուր տան հարևանությամբ բարձրացող ծառն իր պատմությունն ուներ, ինչպես այս գյուղում բնակություն հաստատող ամեն մի ընտանիք:

Կեչիները հաճելի են իրենց նրբագեղությամբ ու սլացիկությամբ: Դրանք մի յուրօրինակ տեսք ունեն՝ գունատ կեղևով ու պայծառ, սրտաձև տերևներով: Շատ ավելի ուշ իմացա, որ ծառի կեչի անունը թարգմանաբար փայլուն է նշանակում, և իրոք, երբ կեսօրին ուշադիր նայում ես ծառին, տեսնում ես, որ ծառը հետաքրքիր փայլ ունի:

Քարաշեն տան դեմ, այգու ցանկապատի մոտ, որպես հսկա մի հովանոց, վեր է խոյացել մեր տան ծառը՝ նրբիրան, սպիտակ կեչին: Շրշում, սոսափում է, երբ զով է, իսկ երբ քամի է, շնչում, շառաչում է, որովհետև տունը կանգնած է բարձունքի վրա, իսկ շուրջը տարածված է փոքրիկ հարթավայրը: Անշուշտ, բարձունք ասելով՝ չպետք է սովորական իմաստով հասկանալ: Այդ երկրի բոլոր գյուղերում բարձունք է կոչվում անգամ փոքրիկ թումբը, քանի որ այն սովորական բարձունք չէր, այլ պաշտպանական մի ամրություն, որ պայքարի ժամանակ իր կարևորությունն ուներ:

Կեչու կատարին, երբ այն դեռ ջահել էր՝ փոքր սաղարթներով ու ցածրիկ, տնակ շինեցինք սարյակի համար: Որ տնակը հայրն էր շինել, որդին լավ էր հիշում, չէ՞ որ ինքն էլ էր մասնակցել: Բայց ուղղակի ապշեց ինքն այն ժամանակ, երբ տեսավ, որ հայրը սարյակի տնակը ծառին ամրացրեց պարանով: Ինքը ոչ միայն զայրացավ, այլև զայրույթով բողոքեց, թե ինչու հայրը տնակը պարանով է ամրացնում, փոխանակ ուղղակի ծառին մեխելու: Հայրը ժպտաց և շեղակի նայելով որդուն՝ ասաց.

—Ծառին վնասելը մեղք է, նա մեխ չի սիրում, չպիտի արհամարհել նրան:

Որդու այն հարցին, թե ծառը մա՞րդ է, որ մեխ սիրի կամ չսիրի, հայրը հանգիստ բացատրեց.

—Որդի՛ս, միշտ հիշի՛ր, ծառն էլ շնչավոր արարած է, նա էլ մարդու պես աճում է, մեծանում, պտուղներ տալիս, ուրախանում գարնան ջերմությամբ, թախծում ձմեռը, երբ բուք է լինում ու մրրիկ: Ծառն էլ մեզ նման ծառայում է մյուսներին, և այնպես է ապրում, որ շրջապատին իր օգուտը բերի:

Էլի շատ բաներ ասաց հայրը, բայց դեռ այն ժամանակ ինքը փոքր էր և չէր հասկանում: Հիմա ամեն ինչ ուրիշ է, նա կանգնել էր ճերմակափայլ կեչու տակ և ամրացնում էր սարյակների վերանորոգված բույնը՝ ամուր կապելով պարանի եզրերը:

1. Դո՛ւրս գրի՛ր երկու բառակապակցություն, որոնցով բնութագրվում է կեչին:

_____

_____

2. Ի՞նչ համոզմունք էր հայտնում հեղինակը:

1) Գյուղը քիչ հարթավայրեր ուներ:
2) Գյուղի ամեն բնակիչ կեչի էր տնկել:
3) Գյուղի յուրաքանչյուր տան հարևանությամբ բարձրացող ծառն իր պատմությունն ուներ:
4) Գյուղի յուրաքանչյուր ծառ իր հետաքրքիր փայլն ունի:

3. Ինչո՞ւ գյուղում ամեն թումբ սովորական բարձունք չէր:

_____

_____

_____

4. Ի՞նչ պետք է հիշեր որդին :

_____

_____

5. Ո՞ր նախադասության մեջ է ամփոփված տեքստի ողջ իմաստը: Գրի՛ր այդ միտքը:

_____

_____

_____

6. Գտի՛ր և գրի՛ր տրված բառերի հոմանիշները բնագրից:

*զարմանալ*_____ *տխրել* _____

*դուրեկան*_____ *անսովոր*_____

*միջօրե*_____ *անտեսել*_____

7. Տրված արմատներով կազմի՛ր և գրի՛ր 1-ական բարդ բառ այնպես, որ այդ արմատը լինի երկրորդ բաղադրիչ:

բույն_____ գիր_____

շար_____ փուշ _____

8. Տրված վերջածանցներով կազմի՛ր 1-ական գոյական:

-ից_____

-անոց_____

-արան_____

9. Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը .

եր__ներանգ ծաղկեփունջ, հ__սքանչ արևածագ, անվանի փոր__ագետ, մեղմ__րեն շոյել անդո__ երեկո, մի__նակ ճամ__որդ, փափուկ մոր__ի, համար__ակ տն__րեն, մեծ հա__թանակ, կենդանու կմա__ք:

_____

_____

_____

_____

_____

10. Համառոտի՛ր տրված նախադասությունը:
Ստեղծարար քանդակագործը հանրության քննարկմանը ներկայացրեց իր «Օտարություն» թեմայով քանդակների շարքը:

_____

_____

11. Ինչպե՞ս են անվանում՝

ա) տրված խմբերին

կովեր_____

մեղուներ_____

օձեր_____

ձիեր _____

այծեր _____

բ) կենդանիների ձագերին

շուն_____

կով_____

այծ_____

ոչխար_____

ձի_____

12. Նշի՛ր՝ որ շարքի բոլոր բառերն են ածականներ.

O գեղեցիկ, գեղանի, քնքշություն

O գարնանային, սաստիկ, սարսափազդու

O հմայիչ, դյութիչ, հրապուրանք

13. Կազմի՛ր նախադասություն՝ կիրառելով քար կտրել *դարձվածքը:*

_____

_____

14. Ավարտի՛ր միտքը՝ գրելով 3-4 նախադասություն:

Կյանքում շատ բաներ են պատահում: Դրանցից շատերը թվում են հեքիաթ, անիրական պատմություններ: Ես շատ եմ ուզում, որ մարդիկ հավատան այդ հեքիաթներին…

_____

_____

_____

_____

_____

_____